

ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲՆԱՆՍԻՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵՒ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԵՑ

Ե . ՏԱՐԻ, ԹԻՒ 9 .

1847

ՄԱՅԻՍԻ 1 .

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ԱՒԵԼՈՐԴԱԳԱՆՏՈՒԹԻՒՆ

Բ .

Սոս Գիտութիւնի և արուեստի .

Հ Մ Ա Յ Ք

Նիս ատենէ՛ի վեր պատմութիւնն ները քննելով՝ գիտենք որ ամէն ազգ կուրաբար հետեւեր են կախարդութեանց , և քրիստոնէ ազգերն ալ ազատ չեն մնացեր այսպիսի մոլորութեանէ , որոնց դէմ ամենայն սուրբ հարք զիններ են և խաբէութիւննին յանդիմաներ են :

Բայց թէ արդեօք հիմակուան կախարդները ինչ միջոցաւ և ինչպիսի վարպետութեամբ կրնան կոր շատ մարդ խաբել և ինքը զինքնին աւտացը նելու , կը բաղձայի մէկ վարպետ կախարդի մը հանդիպիլ՝ կարօղ ըլլալու համար անձամբ քննելով իրենց գործածած խաբէութիւնները իմանալ : Ինչդեռ այս բաղձանացս մէջն էի , մարդուն մէկը շատ ատեն հիւանդութիւն քաշելուն և բժիշկներէն օգուտ մը չտեսնելուն համար , կախարդեալ

ըլլալուն կարծիքը ընտանեաց միտքը մտեր էր : Իւր բարեկամներէն մէկը վարպետ կախարդ մը կը սկսի փնտռել , և տէրվիշ մը կը գտնէ : Եւ յն բարեկամը՝ ինծի ալ գիտացուն՝ երբոր խօսքը բացաւ , ջանացի ամենայն կերպով համոզել զինքը որ այսպիսի խաբէութեանց չհաւատայ : Հնար չեղաւ , խօսքս ազդուութիւն չըրաւ , խիստ նախապաշարեալ ըլլալուն հրմայից և հմայեկաց ճշմարտութեանը վրայ : Չկրնալով բանիւ համոզել փորձով ուզեցի աչքը բանալ . միանգամայն աւիթ մըն էր ինծի ալ քրնուութեան . ուստի ինչդեցի որ ես ալ միատեղ գտնուիմ հմայքը քակած օրը :

Բայց աւելի դիւրութեամբ խելամուտ ըլլալու համար կախարդին ընելու գործողութեանցը , (զի իրենց

խաբէութեանցը մէջ աւելի վարպետ կը կարծէի .) ուզեցի որ մենք տէր-վիշին տունը երթալուն տեղը՝ ինքը հիւանդին տունը գայ : Աստի որոշեալ գիշերը , (զի այսպիսի գործողութիւնք գիշերուան կարօտ են եղեր ,) գնացինք հիւանդին տունը , ուր մասնաւոր սենեկի մը մէջ նստեր էր տգեղ մարդ մը խոժուադէմ , քիչ խօսող , և իւր գիտութեանը վստահայեալ՝ իբրև պատգամ կը հանէր խօսքերը բերնէն : Ինչորեցինք իրմէն որ ժամ մը առաջ ազատէ հիւանդը հմայից կապանքէն : Բսկսաւ իւր գիւթական օճովը ըսել՝ թէ գէշ կապեր են խեղճ ողորմելին , և հորի մը մէջ ձգեր են հմայքը : Յայնժամ ինչորեց որ ապսպրած ամպերը իրեն տան . զի այնպիսի անուշահոտ և թանկագին ծխոց հրաւիրանօք հմայքը կրնան եղեր քակուիլ : Բմպերը առածին պէս՝ ոտք ելաւ վառարանին քովը գնաց , մոմուալով՝ կտոր մը փշոց կրակը ձգեց , մնացածը ծոցը դրաւ , ըսելով որ իւր տունը պէտք է որ շատ աղօթէ և ծխէ , զի գիւրութեամբ չարձրկուիր՝ ըսաւ :

Յայնժամ իմացանք թէ քիչ ամպերով չկրնայ պիտոր քակուիլ հմայքը , և շատ գիշեր գալու կարօտ պիտոր ըլլանք : Աստի այն գիշերը այսչափով լըմնցաւ . բայց պարապ չգանալու համար՝ ուզեցինք իւր վարպետութիւնները իմանալ , և սորվեցանք որ մանր դեւեր կան եղեր , և ինքը իշխանութիւն ունի եղեր զանոնք կանչել և ուղածը հարցընել և ամենայն բան իմանալու : Ըրդեօք , ըսինք , կարելի է որ այն մանր մունր դեւերը մեզի ալ երևնան ճրագի լուսով : Ինչո՞ւ չէ , ըսաւ . բայց մէկ օրով չըլլար , շատ աղօթել և ծուխ տալու է : Աստի հարկ եղաւ ուրիշ գիշեր մը նորէն դառնալու , որ նոյնպէս ամպերին շատը ծոցը մտաւ , բայց խօստացեալ սատանաները չկրցանք տեսնելու : Ինչոր համար ստիպեցինք որ օր մը առաջ հիւանդին հմայքը քա-

կէ : Ա երջապէս այն օրը , կամ մանաւանդ այն գիշերը եկաւ . սենեկին մէկ կողմը սեղան մը դնել տուաւ , և սեղանին վրայ ուրիշ մ'ալ , և անոր վրայ ալ ուրիշ պզտիկ մը . երկու բարձր մոմ վառեց , էն բարձր սեղանին վրայ դրաւ , և մոմերուն առջին լեկէն մը , և մէջտեղը նուսխայ մը փակուց՝ վրան անձուռնի գրերով և թուանշաններով ծածկուած . ջուր լեցուց լեկէնին մէջ . և երբոր այսամէն գործողութիւններս կատարեցան՝ հրամայեց որ դուրս ելլենք : Կէպէտ քիչ մը դէմ կեցանք , բայց հրնար չեղաւ . և ինքը մինակ ներսը մնաց և դուռը գոցեց . ուստի անկարելի էր մեզի՝ ինչ ըրածը տեսնելու : Ը առ չքըչեց՝ դուրս ելաւ . դուռը թէպէտ կէս բաց էր , այլ սեղանը զգուշութեամբ սենեկին այնպիսի կողմը դրուած էր , որ դրսէն չէինք կրնար տեսնել : Բսկ ինքը շարունակ մոմուալով դուրս կ'ելլէր ներս կը մտնէր , կը ծխէր և ձեռքի դանակով աւգին անդին դրանը և պատերուն կը զարնէր . և այս գործողութիւնս մէկ քանի անգամ մը ընէլէն վերջը՝ դուռը գոցեց դուրս ելաւ :

Ինչդեռ կեցած ինչ ըլլալիքին կը սպասէինք , սենեկին մէջ շառափն մը ելաւ . տէրվիշը դուռը բացաներս մտաւ , մենք ալ արտորացինք ետեւէն մտնելու , որ եթէ մարդ կարնէ պահուած՝ տեսնենք . բայց ոչ մարդ կար և ոչ պահուելու տեղ : Ինչ կաշիէ ծրար մը առասանով փաթթած՝ գետնին վրայ կեցեր էր , չորս դին թըղած և մոմին մէկը մարած : Ըլաւ գետնէն ծրարը . Ըհա , ըսաւ , հորին մէջ նետուած հմայքը ելաւ . և ձեռքի դանակով կտրեց բացաւ , և տեսանք որ յար և նման էր ինչ որ կը լսէնք հմայից վրայ . կտոր մը օճառի վրայ մանր ու խոշոր ասեղներ խոթուած և մազ փաթթուած , մէկ ժանգոտ Բիւֆէնէի չախմախ անոր հետ կապուած , հին բեւեռներու կտորուանք : Ըրկաթ թէլով մը չախ-

մախին չորս դին սկսաւ բան մը որոնել, և Քալէայի ծակին մէջէն պուրած թուղթ մը հանեց բացաւ, վրան մէկ այլանդակ մարդու մը կերպարանք գծուած, և վերի դին ուրիշ այլանդակ մարդ մըն ալ ոտքով առջինին գլխուն վրայ կոխած, և չորս դին անկերպարան գծանշաններ և գրեր գրուած: Հարցուցի թէ աս հմայքը որչափ ժամանակ հորին մէջը կեցած է. վեց ամիսէն աւելի է ըսաւ. ինչպէս եղեր է, ըսի, որ այդ թուղթը չէ թրջած և ոչ օձառը հալած. այս հարցմանս ընթուինները վար առնելով ծուռ ծուռ նայեցաւ երեսս և պատասխան չտուաւ, և առաւ տարաւ որ արտաքնոցը նետէ, և պատուիրեց որ վրան ջրվաթ ընեն: Ղարձայ ըսի. դեերը չէն մի սրդողիր, որոնք անուշ հոտերով հրաւիրեցինք և հիմայ այսպէս կ'անարգենք. խոժողադէմ դարձեալ երեսս նայեցաւ և ըսաւ որ ինչ որ կը հրամմեմ նէ ըրէք: Թէպէտ աւտացողներուն մտքին մէջ հմայքը քակուեցան, բայց խեղճ հիւանդին վիճակը չփոխուեցաւ, մի և նոյն մնաց:

Հմայից ինչ ըլլալը իմացանք. ուստի ուզեցինք մանր սատանաներն ալ տեսնել. և որովհետև լուսնոյ վերջի օրերը կ'երևնան եղեր, տասնըհինգ օր ալ սպասել հարկ եղաւ. զի հմայից քակուած օրը՝ լրման ժամանակն էր: Արոշեալ գիշերը գնացինք՝ առանց ամպերը մոռնալու, և ստիպեցինք որ եթէ այն գիշերն ալ դեերը չերևնան նէ՛ այլ չենք դառնար: Առարանով կրակը առջևը քաշեց, սկսաւ մրմնջել և ծխել և ատեն ատեն գլուխը շարժել. վերջապէս նեղանալով մը դարձաւ ըսաւ. Սատանաները չեն ուզեր կոր գալ՝ թէ որ մոմերը չմարին նէ: Իսինք իրեն թէ ինքը այնպէս խոստացաւ, պէտք է որ կատարէ: Ղարձեալ մումուաց և ծխեց և դարձաւ ըսաւ. Ինչ որ ըրի նէ՛ անհնարին եղաւ, չեն ուզեր կոր գալ՝ թէ որ ճրարագները չվերնան նէ: Աւստի հարկ եղաւ յանձն առնուլ. բայց այսպի-

սեաց հաւատացող ընկերս ամենեւին չուզեց մուծ տեղը մնալ. ուստի ուրիշ ընկերներուս մէկուն հետ միայն մնացինք մուծ խաւարին մէջ: Այլ գիշերուան մթութիւնը բաւական չսեպելով՝ պատուհաններուն առջին ալ հաստ բաներ կախել տուեր էր. և յայնժամ իմացանք լուսնոյ վերջի օրերը ինչ զօրութիւն ունենալը:

Սինչդեռ այսպէս դժոխային մը թութեան մէջ նստած կը սպասեինք, թէ արդեօք դեերը ուսկից պիտոր ելնէ և խաւարին մէջ ինչպէս պիտոր երևնան, տէրվիչին նստած տեղին հակառակ կողմէն խոզի խոռոչալու ձայն մը ելաւ, «է՛Ք» իէլի «է՛Ք» իէլ «ի»: Այնքանի անգամ մը կրկնելէն վերջը՝ տէրվիչը մեզի ըսաւ. Մնացեալն, ինչ որ կ'ուզէք նէ հարցուցէք: Ղարձայ ըսի. Այս դեերը չեմ տեսներ կոր, ո՛ւր են: Ան ուզեր կոր երևնալ, ըսաւ, ինչ որ կ'ուզէք հարցուցէք: Աւստի սկսայ հարցմունքս. նոյն խոզի խոռոչանքը նորէն լսուեցաւ. բայց բան մը չհասկըցանք: Ղարձեալ հարցմունք, և անիմանալի պատասխան. և հազիւ թէ մէկ երկու բառ մը հասկըցուեցաւ առանց իմաստ մը ունենալու: Յայնժամ տէրվիչն ըսաւ. Շատ մ'երկընցընէք, զի կրնան նեղանալ և փնաս մը տալ. ուստի հարկ եղաւ լռել. զի մուծ տեղը կախարգը իւր խօսքը ստուգելու համար՝ սատանային տեղը կրնար անցնիլ, ինչպէս որ իրօք ալ անցեր էր:

Ղարագներն եկան. խաւարէն ազատելէն վերջը՝ տէրվիչին դարձանք ըսինք թէ մենք բան մը չկրցանք հասկընալ. և որովհետև մեզի խոստացեր էր առանց ճրագները մարելու մեզի ցուցընել դեերը, կը խնդրեմ ըսի՝ որ խոստմունքդ կատարես: Աւելի օրէն վերջը նորէն դարձանք. բայց աս միջոցիս մէջ իմացանք որ տէրվիչը տանող և բերող մարդէն մեր ով ըլլալը իմացեր և մեզի վերաբերեալ բաներ հարցընելով տեղեկութիւններ առերկէ: Աւստի միտքս դրի այն գիշերը բո-

լորովին օտար բաներ հարցրնել և օտար լեզուով խօսիլ՝ աւելի ևս շփոթելու համար : Այլ որպէս զի պահուած ընկեր մը չունենալը ստուգենք, ամէն անգամ երթալնուս պահուելու տեղուանքը աչքէ անցընելէն վերջը՝ վեր կ'ելլէինք : Ուստի նոյն գիշերն ալ փառի շտեմարանին դուռը հրաճնուս պէս՝ տակէն երկու ոտք երևցաւ . և իմացանք որ այն գիշերուան մեզի երևնալու սատանան եկեր կը սպասէ . ուստի ամուր ձայնով ըսինք . ո՞վ է հոտ : Այս ձայնիս վրայ մեր կախարդը վերէն վար իջաւ , իմ տղաս է , թող հոն նստի , ըսաւ : Այլ , ըսինք , ինչո՞ւ այդպիսի անվայել տեղ կենայ . վեր մեր քովը թող գայ : Սենք վեր ելանք , սենեակը մտանք՝ կախարդին սպասելով :


Քիչ մը սպասելէն վերջը՝ եկաւ , բայց քիթը կախած՝ բարենիս չառաւ և խոժոռագէմ տեղը նստաւ : Սկզբանք իրեն հետ քաղցրութեամբ խօսիլ և իրմէն խնդրել որ դէերը կանչէ : Յայնժամ թթուութեամբ սկըսաւ պատասխանել , թէ սատանաները պիտոր չգան . զարմանալ ցուցըցինք՝ թէ ի՞նչ է արդեօք պատճառը : Պուն , ըսաւ , հաւատք չունիս ընկերօջ պէս . (ընկեր ըսելով՝ կ'ուզեր իմանալ այն որ վախէն ինծի հետ չուզէց մնալ .) ուստի քեզի չեն ուզեր երևնալ , ըսաւ : Ինծի մանաւանդ երևնալու են , ըսի , որպէս զի հաւատամ . ուստի ինքը զինքնին ցուցընեն , և ան ատենը ո՞վ կրնայ ուրանալ : Պարձաւ բարկանալով մը ըսաւ . Արտեսար մի ինչպէս հորին մէջէն հմայքը հանեցի . չտեսար մի որ սենեկին մէջ մարդ չեղած ժամանակը՝ կաշիէ ծրարը շառաչմամբ եկաւ ինկաւ , գետինը բոլոր ջուր թափուած . չտեսար միւս օրը սատանաները եկան ձեզի հետ խօսեցան . ատկէ յայտնի ինչ կ'ուզես ըսաւ : Ինուշուժեանով պատասխանեցի . Այդ բաներդ ընելու համար հաւատք չպահանջեցիր , հիմայ ինչո՞ւ կը խնդրես . առանց ճրագի

եկան , հիմայ ալ թող ճրագով գան : Այլ , չեն երևնար , ըսաւ , ձայնը բարձրացընելով և դէմքը խոժոռելով . զի հաւատք չունիս : Սիշտ անուշութեանով դարձայ ըսի . Սիտ որ հաւատք ըսելով կուրուժիւն կը պահանջեսնէ , փառք Մտուծոյ՝ աչք է տուեր որ տեսնենք , և խելք՝ որ իմանանք : Իայց տեսնելով որ քանի անուշութեանով կը խօսիմ նէ՝ ինքն այնչափ խոտուժք զիս վախցընել կը նայէր , ուստի հարկ եղաւ որ ես ալ լեզուս փոխեմ . Սիտ որ հմայք քակելովդ զիս խաբել կ'ուզես նէ , ես ալ առանց դիւական ու գւոց օգնականութեան կրնամ քակել , ըսի . իրաւ է որ ներսը մարդ չկար . բայց ինչո՞ւ թող չտուիր որ մենք ալ ներսը գտնուէինք , և դիւաց առանց երևնալու բերել սենեակին մէջ նետելը տեսնէինք : Ան սրդողիր ինչպէս ըլլալը քեզի պատմեմ նէ , ըսի : Հորէն ելած ըսած ծրարը՝ ծոցէդ կը հանես , մոմին վերի կողմը կը կապես . և երբոր կը տեսնես որ բոցը կապած թելիդ կը մօտենայ , ան ատենը շուտով դռնէն դուրս կ'ելլես , մոմը կը հալի՝ թելը կ'երէ , և կապուած ծրարը շառաչմամբ կոնքին մէջ և անկէ ալ գետինը կ'իյնայ չորս դին թըլելով : Այլ աս ըսածներուս ճշմարտութեանը ապացոյց՝ մէկ մոմին մարած ըլլալը , թղթին և օճառին թըլուած չըլլալ և չհալիլը չէ մի : Ի՞նչ պատասխանս զինքը բոլորովին շփոթեց , ինչ ըսելիքը չգիտցաւ . քիչ մը կանկ առնելէն ետքը՝ դարձաւ ըսաւ . Այլ , սատանաները՝ որ խօսեցան և ըսածներուդ պատասխան տուին նէ , ըսելիք ունիս մի : Ողորմելի տերվիջը կարծեց որ մուժ տեղը ըլլալուն համար՝ ինչ ըլլալը չիմացանք . դարձայ ըսի . Ի՞նչ օրն ալ ոչ դէ կար և ոչ սատանայ . այլ այն դէ ըսածնիդ՝ հրամանքնիդ էլիք որ փողով մը խօսեցաք ձեր ձայնը ըլլալը չիմացընելու և զմեզ վախցընելու համար . և տուած պատասխաննիդ ոչ դուք գիտէիք որ մենք ալ հասկընայինք : Իսկ աս գիշերուան

տեսնելու գեներնիս ալ խեղճ ողորմելի փատի շտեմարանին մէջ սպասող տղան է , որ չհամարձակեցար առջևնիս հանելու : Մենք , ըսի , աս բաներուս ձեռնածուծիւն կ'ըսենք , և կուրաբար չենք կրնար հաւատք ընծայել :

Եւ ըսածներուս վրայ կատղելով , և շփոթեալ ինչ ըսելիքը չգիտնալով , սկսաւ սպառնալով ձայնը բարձրացրնել և ըսել , թէ զգոյշ կեցիր՝ դիւաց զօրուծեամբ գլուխդ մեծ փաստներ կը բերեմ : Այդպիսի խօսքերով , ըսի առանց այլայլելու , զիս չես կրնար վախցընել . քեզի հրամանն , ինչ որ կ'ուզես նէ՛ ըրէ , ըսի . թէ որ այդ կարողութիւնը ունիս նէ՛ ինչ հարկ կայ սպառնալու . սենեակդ մտիր , սատանաները գլուխդ ժողովէ , ինչ կ'ուզես նէ ըրէ որ տեսնեմ : Այդպիսի խօսքերով գնա ռամիկ ժողովուրդը խաբէ , ամպէր ծխեմ պիտի ըսելով՝ բերած ամպէրնին ստակ ըրէ : Եւ ըսելով դուրս ելայ , իմանալով որ ինչպէս կուպիտ միջոցներով պարզամիտները կը խաբեն եղեր , առանց ձեռնածուններուն վարպետութիւնն ունենալու : Եւ ահա տասնըհինգ տարիէն աւելի է քանի որ ողորմելի տէրվիշը այդ սպառնալիքը ըրաւ , և դեռ փնաս մը չկրեցի :

* *



Որչաճաղ ճարգոս նկարագիր :

ՈՐԿՐԱՄՈՒ ըսելով՝ չեմ իմանար հոս անոնք , որ իրենց երջանկութիւնը կերուխումի վրայ դրեր՝ այնչափ կ'ուտեն ու կը խմեն , մինչև առողջութիւննին ալ կը կորսընցունեն , հանդերձ պժգալի հետեանքներով՝ որ մինակ ալ բաւական ատելի կ'ընեն որկրամուլութեան ախտը : Բայց ես հոս որկրամուլ ըսելով՝ կ'իմանամ սովորական կերուխում սիրող մարդ մը , որ իրեն ախտը չսանձելով , ու իրեն

ծակաչք կերպովը՝ որկրամուլութեան տիտղոսը բաւականապէս կ'արդիւնաւորի : Եսանկի մը հետ սեղանակից եղողները՝ աւելի համը կ'առնեն աս նկարագրիս :

Եւ մէն բանէն առաջ ձրի սեղան կը փնտրուէ . սեղանը օրհնուելու ատենը՝ կը սկսի աչքը կերակուրներուն վրայ պտըտոցընել՝ դիտել որ իր ախորժած բաներն են թէ չէ : Հայր մերը լմընցածին պէս՝ հեռուանց չձանչցած մէկ բանը կայ նէ՛ պնակը ձեռքը կ'առնէ , ու մօտանց կը նայի , կը հարցընէ թէ ինչ կերակուր է : Կ'ենջակը վրան առնելու ատենը՝ Մեղք որ աս կէս օր այնչափ ախորժակ չունիմ կ'ըսէ . բայց ուտելու ատենը աղէկ կ'երենայ ունի թէ չունի : Եւ ուրը կը լմընցընէ չիլմընցընէր՝ Եփսոս որ աս առաւօտ նախաճաշիկս ուշ ըրի , ախորժակս գոց է ըսելով , ամենէն առաջ ինքը խաշածին ձեռք կը զարնէ : Մէկ պատառը չկըլլած՝ մէկալը բերանը կը խոթէ . անանկ որ՝ բանի մը պատասխան տալ պէտք ըլլայ նէ , լեցուն թուշերով կարծես թէ չլըսուած լեզու մը կը խօսի : Ուտելու ատեն՝ խօսակցութիւն ընելու տեղն է կ'ըսէ մտքէն , ու իր բանին գործքին հետ կ'ըլլայ . թէպէտ և խեղճը առտուանց ուշ նախաճաշիկ ըրեր է , ախորժակը բաց չէ :

Ուտելու ատենը աչքը ուրիշներուն պնակին մէջն է . նոր կերակուր մը գայ սեղանը նէ , մէկէն կը դիտէ որ կտորն է մեծն ու աղէկը՝ որ ան առնէ : Սիրած մէկ բանը գայ նէ , մէկէն իմ ախորժած կերակուրս է ըսելով՝ ձեռքը կ'երկընցընէ , ու թէպէտ առտուանց ուշ նախաճաշիկ ըրեր է՝ աղէկ մը անկէց ալ կ'ուտէ : Ինքը զինքը անմեղադիր ընելու համար ալ , Ես իրիկունները ընթրիք ընելու սովորութիւն չունիմ , անոր համար կէս օրը քիչ մը աւելի կ'ուտեմ կ'ըսէ . իրիկուան ըրած ընթրիքս՝ ապուր մը , խորոված մը , անուշեղէն մը , պանիր ու պտուղ է : Ինտալդ կը բռնէ՝ որ